

ԱՆՐ. ԱՆԿԵԼՆ

# ՉՈՐԱԿՆԷՐ

ՔԵՐԹՈԼԵՆԵՐ

891.99
U-15

1936

891.99  
U-15

ՍԱՐ. ՍԱՀԱԿԵԱՆ

# ՔՐԻՆԱԼ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

(1923—1935)



ԳԱԶԻՐԷ

1936



48.

66 23

20 Ն

Ձեզի՝ լոյսով ակաղծուն  
Պա՛րզ հոգիներ հեզ՛համբոյր,  
Ձեր անունին խնկաբոյր՝  
Բերքն՝ որ կուտայ ձե՛ր ածուն...

Ու ձե՛զ՝ մշակներ, որ թափուր  
Հոգիիս մէջ երազուն  
Ցանեցիք «քա՛ղցրը լեզուն»  
Շրոայլօրէն, բուռ առ բուռ...



23745-59

Ու ձե՛զ՝ ու ձեր ոգիի՛ն՝  
Մեծ կախարհներ հայ գիրին,  
Որ սրնուցի՛ք զայն յետոյ

Եւ կը յուզէ՛ք դեռ այսօր  
Ձեր տողերով ջինջ ու խոր...  
Ձօն՝ մորմոքի ու սիրոյ...:

1935

## Զ Ո Ր Ա Վ Ա Ն Ք

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՌԵՍՈՒՑՅԻՍ՝  
ՎԱՀԱՆ Ս՝ ՔԻՒՐՔՃԵԱՆԻ ՀՈԳԻՆՆ

Այգն ամենուր կը ցանցընէ բուռ-բուռ ծաղիկ,  
կայծ ու բոց...  
Գետակն ըշտապ կը սողոսկի խորն արփաւէտ  
ծորակին,  
Ու կը ճանկէ, կը փայփայէ՛, ըստ իր կամշոտ  
քրմայքին,  
Իր նեղ հունը պարածածկող լուռ քարափներն  
ոսկեզօծ...

Մայիսն՝ արե՛ւ, երգ ու շափրակ կը թափէ սառ  
ջուրին ծոց.  
Այծտերեւին կ'ողջագուրէ ձեր կամուրջը  
տարփազին...  
Ու շոճիներ կը պըսակեն ժայռերն որոնց  
քամակին՝  
Կը յօրանջե՛ն քարանձաւներ — ըղձանուշի՛  
թաքըստոց...:

Ու գիւղին դէմ կը սօսափեն սէզ բարտիներ  
երկնամուխ.  
Լուռ ջրրափին, ակերուն շուրջ ու քարերուն  
վրբայ թուխ  
Բիւր բաժակներ կը ժպտին, թա՛ց՝ ցայգուն բիւրեղ  
արցունքէն,

Մինչ կ'ամպանա՞ն հիւղակներէն նուրբ երիզներ  
սատափէ...  
Եւ հինաւուրց անծաւ-մատո՛ւոք սարերու  
բարձունքէն  
Ծրմակն ի վար ղօղանջիւններ եւ օրհնութի՛ւն  
կը թափէ...:

1923

ԳԵՂՕՆ՝ ՎԱՀԱԳՆԻ

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆԻՆ

Գիշերն ի բուն սարերն Հայոց  
Սասանեցա՞ն դըղըրդագին.  
Անտառին մէջ, վիհերու ծոց  
Հովերն անդուլ շեփո՛ր զարկին...  
Ու մըխեց շանթն՝ ամբարտակին  
Կապոյտ սըլա՛քն իր ամեհի...  
«Երկնեց երկիր, երկնեց երկին,  
Երկնեց եւ ծո՛վը ծիրանի...»

Ահա՛ ծովուն մէջ ալեկոծ,  
Շառ եղեգնիկն աստուածածին  
Կ'արծակէ ծո՛ւխ, կ'արծակէ բո՛ց...  
Ահա՛ չքնաղ լուսաբացին  
Ամպերը բորբ կ'ոսկեզօծի՛ն,  
Ու շրոխնդով մը կատաղի  
Տարերք կ'եռա՞ն, կ'ուռի՛ն, կ'աճի՛ն...  
Կը թնդայ ծո՛վը ծիրանի...

Ու եղեգէն, արգանդ-հրնոց,  
Կը թռչի՝ շէկ, լուսամարմին  
Ու հրրածամ Աստուածն Հայոց  
Արեւաչուի՛...: Կ'իյնայ քամին,  
Ու՛ թափն հրգօր ճգնաժամին.  
Եւ, ծոցին մէջ իր հոլանի  
Մինչ կատարներ կը կարկամի՞ն,  
Կը ծըփայ ծո՛վը ծիրանի...

20Ն

Ո՛վ Դից Իշխան, հոգիս՝ կրկին՝  
Աստղէ ճամբադ ո՛ւր կը տանի...  
«Երկնէր երկիր, երկնէր երկին,  
Երկնէր եւ ծո՛վը ծիրանի...»

1932

## Տ Ա Ի Ր Ո Ս

Ամպերը դանդա՛ւ կը սահին կ'անցնին  
մըթամած կիրճէն,  
Ուր միշտ կը շաչէ՛ մայրիներու ծով  
անտառը ծըփուն.  
Ապառաժն ի վեր կը գալարուի նե՛ղ  
երիզը ճամբուն.  
— Հոգի՛ս, ի՛նչ հեշտանք, անցնիլ այս հըպա՛րտ  
սարերուն մէջէն...:

Հեռուն, վիհն ի վար կը փըխրի յանկարծ  
ձիւնահիւս մ'անտես...  
Չորս դին ամեհի ջրովէ՛ժներ անվերջ  
կ'եռա՞ն, կը կանչե՞ն,  
Ու խոր ձորերէն՝ արծազանգն — հըսկա՛յ  
նըւազահանդէս —  
Կ'անցնի՛ սարէ սար, մինչեւ հեռակայ  
գիւղակները շէն...:

Ու վարը, խութին դէմ, հեղեղն, հարբա՛ծ,  
կ'ոռնայ շառաչուն.  
Հովը ծառերուն մէջ կը փողերգէ  
տաղեր բարբարոս...  
Մամուտ ժայռերու ներքեւ կը ժպտին  
ակեր պաղպաղուն...

Եւ իրիկուան դէմ, ջրրափէն մինչեւ  
թաւուտներն անդորր,  
Ծիրան մըշուշով, բոյրով կը պոռթկա՛յ  
կիրճն անդընդախոր...  
— Ի՞նչ երազ, Աստուա՛ծ, ապրի՛լ այս կախա՛րդ  
սարերուն մէջ, հոս...:

1927

## ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԻԿԻՍ ՇՈԳԻՆՆ

Մայիսի քաղցր արեւին տակ,  
Գիւղն էր փռուած ծորի շուքին.  
— Ողջունեցի՞ն մեզ սրտագին  
Աքաղաղի կանչեր յստակ...:

Հոն կը բաղխէր դուռն երկնքին,  
Վանքին զանգակն — հըրաւիրակ՝  
Որ մեզ բաշխե՛ց բաժակ-բաժակ  
Անուշութիւնն իր նըւագին...

Հոն ջինջ մանուկ մըն էր վըտակն  
Որ կը խաղար ծառերուն քով,  
Խիհերուն մէջ՝ քարէ գնդակ...

Արդ կը յիշե՛մ ձեզ կարօտով,  
Ո՛վ, գարնան հին առաօտով՝  
Աքաղաղի կանչե՛ր յստակ...:

1935

## Ք Ա Ո Ս Ը

Այս երեկոյ, հոգւոյս՝ սեւ,  
Մըռայլամած վիհերէն,  
Աղօտ յուշեր, հեւ ի հեւ,  
Կ'առեւանգեն զիս նորէն...

Յուշեր տըխուր ու զըւարթ,  
Յուշեր մօտիկ, հեռաւոր...  
Կսկիծ ու ցաւ, խղճի խայթ,  
Իղձեր, տենչեր բիւրաւոր...  
Ատելութեան ոխերիմ  
Խէթ նայուածքներ թունալից,  
Եւ անուններ մըտերիմ,  
Դիմաստուերներ սրտակից...  
Աղու, կըծու համբոյրներ,  
Մանուկ աչքեր ժպտագին,  
Կշտամբանքի մրմունջներ,  
Սիրոյ բառեր անմեկին...

Եւ անցեալի թափանցիկ  
Մըշուշին մէջ կորսըւած  
Երազ օրեր վաղանցիկ,  
Երգեր, ձայներ մոռցըւած...:  
Ու բիւր ծաղիկ ու փուշեր  
Գգուանքներով տարօրէն  
Կուգան, կուգան այս գիշեր  
Զիս կը տանջեն, կ'օրօրեն,  
Կը հեծկլտան վայրապար,  
Կը քրքրջան, կը խօսին,  
Մինչեւ իյնամ ու ժասպառ:  
Գիրկն այս անլուր քառսին...

Այս երեկոյ, հոգւոյս՝ սեւ,  
Մըռայլամած վիհերէն,  
Մեռնող յուշեր, հեւ ի հեւ,  
Կ'առեւանգեմ զիս նորէն...:

1925

ԿՍ.ԾԱՆՆԵՐԸ

Կածաններու պէս վըտիտ,  
Յուշերն՝ ըզգո՛յշ՝ կ'երկարին  
Դէպի անցեալ՝ դէպի հին  
Օրերու վիշտն ու ժրպիտ ...

Մերթ ափերու շուրջ վըճիտ,  
Թաւուտներու մէջ խորին,  
Յուշերն՝ ըզգո՛յշ՝ կ'երկարին,  
Կածաններու պէս վըտիտ ...

Ու կարօտներ լուսաշիթ,  
Մորմոքումներ անմեկին  
Կը համակեն մեր հոգին,  
Երբ վաղուցուայ՝ միամիտ  
Յուշերն՝ ըզգո՛յշ՝ կ'երկարին,  
Կածաններու պէս վըտիտ ... :

1932



## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Գուցէ դուն կրնայիր՝ ինձ համար՝ արհաւիրտ  
Գիշերէն վերջ ծագիլ իբրեւ ջինջ առաւօտ ...

Կրնայիր դուն ծաղկի՛լ, գերթ հըրաշք ուլասիս,  
Անսահման աւագին վըրայ սեւ ձանձրոյթիս ...

Կրնայիր գէթ ժպտի՛լ՝ մութին մէջ իբրեւ լոյս,  
Եւ ըլլալ հանգրուան իմ մուար քայլերուս ...

Բայց սրտիդ նամբուն վրայ՝ խոնջ հոգիս շրփոթուն,  
Զոր սիրովդ ըսփոփել կրնայիր գուցէ դուն,

Հեւսպառ ըսպասնց ու դողանց ընդերկար  
Բայց ի զո՛ւր, քանի որ դուն չեկա՛ր, դուն չեկար...:

1926

## ՅՈՐՄԷՀԵՏԷ ԱԶՔԵՐՈՒԴ ...

Յորմէհետէ աչքերուդ մատեանին մէջ հրաշալիր  
Թոյլատրեցիր որ կարգամ քերթուածն աղուո՞ր հոգիիդ ...  
Յորմէհետէ սփռեցիր դուն շուրջս արե՛ւ ու ժըպիտ,  
Կարծես հիւանդ եմ, զինո՞վ՝ ես անձիս չե՛մ պատկանիր ...

Մէկու մը պէս որ՝ յանկարծ՝ գանձ մը գըտած՝ սրտաթունդ,  
Մերթ կը պահէ զայն ահով, մերթ կը սեղմէ կուրծքին զայն,  
Ես կը յառեմ իմ աչքերս՝ աչքերուդ ծո՞վ քաղցրութեան ...  
Ա՛հ, զանոնք մի՛ խոնարհեր, ի սէր անո՞յշ արեւուդ ...:

Հիմա այն լուռ անտառակն ու քարանձա՛ւը մըթին,  
Ու նստարանն ստուերին մէջ հինաւուրց ծառերուն  
Ուր ջերմ արե՛ւը սիրոյդ պարածածկե՛ց իմ հոգին,

Կ'ոգեկոչեմ ամէն պահ ես յուզումով անանուն,  
Ինչպէս հին յարկ մ'ընտանի, ուխտատեղի մ'ինչպէս սո՛ւրբ...  
Ու կը թռչի՛, կը թռչի՛ սի՛րտըս կարծես կուրծքէս դուրս ...:

## ԱՆՈՐ՝ ՈՐ ԶԻՆՋ ՀՈԳԻԻԳ...

Անոր՝ որ ջինջ հոգիիդ խաղաղութի՛ւնը հըպարտ  
Այնկոծեց, վրդովեց օր մ'ակամայ՝ դուն, ներէ՛ ...  
Սակայն գիացի՛ր ինչպիսի՛ անկումներէ, գոհիհներէ  
Զայն բարձրացուց, զայն փրկե՛ց սիրոյդ արե՛ւը  
զըւարթ ...:

Ան կը ձգտի հիմա վե՛ր, դէպի բարձունքը կախարդ  
Ըսքանչելի՛ քու սիրոյդ. ան, սըրաթոհիչ գերթ երէ,  
Ըստուերներէ այժմ ազա՛տ ու վե՛ր թժնուտ ամպերէ,  
Կը նըւանէ գագաթներ ուր ե՛րբեք չէր հասած  
ցարդ ... :

Դուն որ ոչինչ չըտըւիր բայց եղար ա՛յնքան շըռայլ...  
Դուն որ՝ արե՛ւ՝ ցրուեցիր հոգիիս մէ՛զը մըռայլ,  
Այս՝ լերան չափ հրճուանքն ո՛ւր պահեմ, ըսէ՛,  
կուրծքիս մէջ ...

[Թեան,  
Դուն որ հոգիս հասցուցիր այս անարկու բարձրու-  
ի՛նչ ալ ընես կամ ըլլաս — եթէ նոյն իսկ գահավէժ  
Ձայն արձակես վիհն ի վար — եղի՛ր օրհնեա՛լ  
յաւիտեան ...:

ԱՆ՝ ՉԴԻՏՅԱՐ, ՔԵՉ ՀԱՄԱՐ ...

Ան՝ չըգիտցա՛ր, քեզ համար ինչ մե՛ծ, ինչ լա՛ւ բարեկամ  
Մ՛եղաւ, որ բնաւ իր եսին չանսաց թաքուն ցանկութեանց,  
Իր յոյզերուն, տենչերուն, երազներուն դըրաւ սանձ,  
Որ դուն հըպա՛րտ ըլլաս միշտ ու կեանքըդ՝ քա՛ղցր  
յարածամ ... :

Ան, իր մըռայլ հոգիին մենութեան մէջ անթափանց,  
Իր քայլերուն տակ փորեց վիհեր խըրամ առ խըրամ.  
Ան քու ճամբուդ վրայ թողուց որ ծագի ա՛յգն անթառամ,  
Որ ինք ու դուն յաւիտեան չըհանդիպի՛ք ալ միմեանց... :

Դուն կրնայիր զինք փրկել — նաւահանգի՛ստ բարութեան —  
Իր կեանքն էիր դուն, արե՛ւն էիր, իր յո՛յսն՝ յաւիտեան,  
Բայց ան չուզե՛ց որ տարփանքն իր խաղաղ սի՛րտըդ յուզէ...

Եւ ահա՛ ինչ որ մընաց քեզմէ — իր գա՛նձը բոլոր —  
Քաղցրակարկաջ «Տաղեր»ուն մէջ Գերթողի մը լուսէ,  
Փռչին ծաղկի մը կապոյտ — անուշաբոյր տափուլու...:

## ԳԵՂՕՆ ՇՂԹԱՅՈՒԱԾ ԱՐՔԱՅԻՆ

ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻՆ

Քարանձաւի մը մէջ մըթին —  
Հայրենի հի՛ն զըրոյց մը կար  
Թէ — մեր ըմբոստ Արքայորդին  
Շղթայեցին Քաջերն ի սպառ ...  
Բայց քանդելո՞ւ Ան պիտի գար  
Օր մ'այս երկիրն ահեղօրէն ...  
Ան պիտի գա՛ր երբ չի թնդար  
Ալ ոչ մէկ ձայն դարբնոցներէն ... :

Շիկակարմիր մայրամուտին՝  
Երբ արքայ հօրն անէծքը չար  
Կալանաւորն՝ իր անդունդին  
Մէջ կը կըքէ՛... շուրջն՝ ամէն ծառ,  
Ու հոծ անտառն, ու բիր մացառ  
Կը շրջնչե՛ն ... մինչ կրծելէն  
Շուններն ա՛լ խո՛նջ են չարաչար ...  
«—Ա՛լ ոչ մէկ ձայն դարբնոցներէն...»

Դի՛ք, պատարա՛գ՝ ձեր խորհուրդին  
Մեր սիրտը բո՛րբ, ատելավա՛ռ ...  
Մենք թէ՛եւ որբ, վայրավատին՝  
Դեռ կը հսկե՛նք Դարձի՛ն համար,  
Այ թող իյնա՛ն կապանքն յամառ,  
Ու թող թռչի՛ իր բոցեղէն  
Հեծելագունդն աստղահամար  
Մեր շիջանուտ դարբնոցներէն ...:

20

Իշխա՛ն, արի՛, ու սարէ սար  
Թող որոտա՛յ մոյեզնօրէն  
Ցասուժիդ շանթն հրրաշափառ ...  
— Այ ո՛չ մէկ ձայն դարբնոցներէն ...:

1932

ՎՐԷԺՆ ԻԲՐԵԻ ՍԵԻ ԴՐՕՇ ...

Վրէժն իբրեւ սեւ դրօշ կը շառաչէ՛ ինձմէ՛ ներս  
Իր լերկ գանկով քերելուն, բարձոսկրերիտով խաչածեւ,  
Ու կը փակէ՛ յաւիտեան հորիզոններն աստղահեւ ...  
Մախանքիս գոռ դոփիւնէն կը մըթագնի՛ն աչուրներս ...:

Ես պարտըւա՛ծ եմ սակայն, ես՝ զինաթա՛փ ծովահէն,  
Կը հայհոյեմ անձիս դէմ ու կը տանջե՛մ նաւագներս ...:  
— Մինչ հոն Հրեովմ կը կանգնի նորէն պատնէ՛շ առ պատնէ՛շ,  
Ես չունիմ ո՛չ մէկ բեկոր պապերուս զէն ու զրահէն ...:

Քայց չի կրնա՛ր ըլլալ որ ես իմ վերջին քաջերով,  
Ատամներով, ճանկերով գտնեմ միջոց ու կորով,  
Եւ ինծի հե՛տ, ինծի պէ՛ս՝ ցռկանաւե՛րը վառե՛մ ...:

Դի՛ք, յաղթանա՛կ մը միայն թող հարճատէ հոգւոյս դէմ.  
Թող պղպրջայ սրտիս մէջ արբեցութի՛ւնը ուժին՝  
Ու թող ծագի՛, եթէ հարկ է, իմ արե՛ւըս վերջին...:

1934

ՄՂԶԱԻԱՆԶԸ

Ի գու՛ր երեկոն կ'իջնէ լուռ ու զով.  
Ի գուր կը ժպտի այգը՝ կապոյտին...  
— Նոյն տենչը, գիտե՛մ, նոյն վիշտը խրթին  
Պիտի մի՛շտ հոգիս լկե՛ն թախիծով...:

Գալիքն անապա՛տ — ոչ մէկ յոյսի ջով...  
Ու ներկան՝ այնպէ՛ս փրցուն ու մըթին.  
— Լոկ մուխն իղծերու փըլածակոյտին...  
Եւ անցեալն՝ արդէն տըւայտանքի ծով...:

Մի՛տք, պիտի չըտա՞ս ինձ օ՛ր մը, գիշե՛ր  
Մ'ուր հին դէմքերու կշտամբող ոգին,  
Վերջիշունն անլո՛ւր մեր տառապանքին,

Ու գիտակցութի՛ւնը ժանտ մանաւանդ  
Մեր անգորութեան յաւէ՛րժ հրնազանդ՝  
Սրտիս մէջ չըգա՞ն քստըմնել փուշեր...:

1929

Ե Ր Ե Կ Ո Յ

Միապաղաղ իրիկնամուտ ծագէ ծագ.—  
Հորիզոնէն կը քաշէ կառքն արեւուն  
Ծիրանեփառ՝ գրնացքը շէկ ամպերուն...  
Հօտը կ'իջնէ բլրէն կոհակ առ կոհակ ... :

Վըտակին մէջ կենդանութեամբ պատարուն,  
Կ'ըմպեն՝ հակած՝ ուռիներ—խո՛նջ երամակ—  
Գիւղն հովտին մէջ կը մըրափէ՝ խորամանկ  
Մըշուշն ալ՝ նուրբ՝ կ'իջնէ խաղա՞ղ դաշտերուն...:

Մերթ կը խայտան կածաններուն մէջ ուլեր,  
Մինչ հիր շրդարը մը կ'ըսքողէ սար ու լեռ,  
Ու կոչնակին կը կափկափէ կանչը բամբ ...

Ու մերթ այս ծով անդորրութեան մէջ պայծառ  
Խըմբերգի թեւ մը կ'երկարի՝ ծառէ ծառ  
Ու կ'օրորէ՝ հոգիս՝ անբաւ քաղցրութեամբ ...:

1923

Ի Ղ Զ

Անտառ մ'ըլլար սա պողոտան բազմաժրխոր,  
Կորաքամակ կաղնիներով հագարամեայ,  
Ոլոր մոլոր կածաններով լըռին ու խոր  
Ու լեռնային բուրումներով հոգեհրմայ ...

Ու սա պղտոր, հիւծող խըրամն՝ ուր կը սողայ  
Ջուրն՝ ըլլար լին մը պաղպաջո՛ւն, ականակի՛տ,  
Ծառերուն մէջ լապտերներն՝ աստղ ու փոսուռայ ...  
Եւ անցորդներն ալ՝ օդանո՛յշ, այծեամ ու վիթ ...:

Ու բարձրաբերձ շէնքերն համակ ըլլային լե՛ռ,  
Անչափելի խոր անդունդներ՝ մայթ ու փողոց,  
Ու խուցս ըլլար լուռ քարանձաւ մ'ամպերն ի վեր,

Ամպերն ի վեր, կախարդական սարերու ծոց  
Ուր քաղքին այս գեհենական ժըխորը լայն՝  
Համբոյրի պէս՝ թո՛յլ սօսաւիւն մ'ըլլար միայն ...:

1926

Ե Ր Գ

Տե՛ս, երաշտ հոգիիս  
Արտորայքն՝ յամրաբար՝  
Յորդառատ հոսանքին  
Մէջ սիրոյդ, կը ծաղկին  
Իբր անծայր ովասիս,  
Դարաւոր իբր անտառ ...

Տե՛ս, մըռայլ խութերուն  
Ու ցասման մէջ ծովին,  
Ձերթ փարոս մը հեռուն,  
Ձերթ ճաճանչ մը հովին՝  
Աչուրներդ ինձ կ'ըլլան  
Փրկութեան հանգրուան ...

Ու վիշտն իմ — սառնակո՞յտ —  
Տե՛ս, քու ջերմ ու կապոյտ  
Շունչիդ տակ սխրալի,  
Կը փխրի, կը հալի,  
Կը փոխուի նայնհետայն  
Անապակ խնդութեան ... :

1928

## ԱՇՈՒՂԱԿԱՆ

Ի՞նչ անոյշ՝ բայց ինչ խակ ես դուն ...  
Մշտազրուարճ սոխակ ես դուն.  
Ծաղկանոցիս մէջ, քաղցր աղջիկ,  
Սպիտակ վարդ, մեխակ ես դուն ... :

Ալեծրփուն ծամեր ունիս.  
Խենթեցընող ժամեր ունիս ...  
Անմահական դրրախտի միրգ,  
Ի՞նչ ըզգլխող համեր ունիս ... :

Կեանքս՝ ինչպէս թել մանեցիր դուն ...  
Ձիս հաւատքէ հանեցիր դուն ...  
Մերթ սիրտըս սեւ անդունդներուն՝  
Մերթ աստղերուն գամեցիր դուն ... :

Բայց քու պըրանքդ ես կը սիրեմ.  
Փաղաքը շանքդ հեզ՝ կը սիրեմ.  
Իմ էութեանս ամբողջ ուժով,  
Նայ նունուֆար, քե՛զ կը սիրեմ ... :

1928

## ԳՈՀՈՒԹԻՒՆ

Նայուածքին համար ջինջ աչքերուդ,  
Որոնց լու՛ռ քաղցրութիւնն հոսանուտ  
Ծագեցա՛ւ օր մ'իմ դէմս՝ ինչպէս մութ  
Բարայրի մը մէջ լոյս՝ գոհութի՛ւն ...

Մատներուդ գգուանքին համար սուրբ,  
Որ իջաւ առաւօտ մ'իբրեւ հուր՝  
Ձեռքերուս պղծութեան վրայ ցուրտ  
Ու լըւաց զիս կեղտէս — գոհութի՛ւն ...

Արտասուա՛ցըդ համար, մանաւանդ,  
Որոնցմով եղաւ սիրտս արգաւանդ,  
Ու սիրոյդ՝ որ տարաւ հընաւանդ  
Զիս դղեակն երազին — գոհութի՛ւն ...

Եւ բոլոր անմոռաց ու անդարձ  
Պահերուն համար զոր տըլիր դո՛ւն,  
Բառերուն համար զոր ըսիր դո՛ւն,  
Քե՛զ՝ սրտի՛ս խորերէն գոհութի՛ւն ... :

### ՅՈՅՍԸ

Դիր ամէն դի ցիր ու ցան.  
Բիր քանդակներ դարձած հող.  
Լերան կատարն ըսպատող՝  
Հոգիս՝ բազինն է կործան ...

Հիմա օձեր կը խայտան,  
Ու չար կիրքեր՝ մթասքող  
Պատերն ի վեր մխացող  
Այդ հընամի սրբատան ...

Բայց նրսեհին իր հըլու,  
Հին խնկաբոյր իմ հոգին,  
Բոյն թէեւ բիւր դեւերու,

Դեռ կ'ըսպասէ՛ անծկագին  
Որ հեռաւոր դաշտերէն,  
Առտու մ'այցի՛ր գայ իրեն

Վըճիտ Երագ մը նորէն ... :

1927

## Ա Ն Ձ Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կը կարկամին դուրսը ծառերը՝ հովին  
Ու քնաշրջիկ լուսնակի պաղ ցոլքին տակ ...  
— Այս որքա՛ն ցուրտ է, ցուրտ՝ սըրահն ըսպիտակ,  
Ու սառ՝ մահիճն ուր կը թաղուիմ կիսովին:

Ուրուանըման լուսնակի պաղ ցոլքին տակ,  
Դուրսը ձայներն հետըզհետէ կը սառին ...  
Աչքերս յառած որմի մը գորշ պաստառին,  
Կը պարպրիմ կարծես բաժակ առ բաժակ ... :

Դուրսը շշուկն հետըզհետէ սառեցաւ.  
Միջանցքներուն կարծես կեցաւ սիրտը քար ...  
Բայց նինջն ինչո՞ւ պարաջնջել դեռ չի գար

Ձիգ ժամանակն իր քայլերով մետաղէ,  
Ծեր լուսրնկան որ հող, մոխի՛ր կը մաղէ,  
Ու խոնջ մարմինս որ, ա՞հ, ի գուր տանջուեցաւ...:

1924

## ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Միապաղաղ գորշ կարաւան, օրերն անցան ...  
Լըռեց զօղանջն՝ յոյսերու փակ հորիզոնէն ...  
Այ ո՛չ մէկ շող մանկութեան պերճ լուսատունէն...  
Կը հերկէ սի՛ւտըս Տարակոյսն որոմնացան ... :

Ամայութիւն է շուրջս հիմա լուռ ու դաժան ...  
Ձերթ ծիծառներն՝ աշնան՝ իղձերս ա՛լ կը զաղթեն  
— Հոգի՛ս, ըզգոյշ անցիր այս մառ արահետէն  
Ձի կ'ուղեկցի քեզ արդ խոնջէ՛նքը դաւաճան ... :

Անցեալն, ափսո՛ս, լքուած պարտէզ մըն է սուգի  
Ուր կը ննջեն այժմ երազներդ հեռահրմայ ...  
Բայց ոչ մէկ լաց եւ ոչ մէկ շիթ արտասուքի ...

Քալէ՛, հոգիս, այս քարքարուտ ճամբէն ... յառաջ ...  
Քալէ՛ մինչեւ՝ խեղճ կեանքդ օր մ'իրիկնանայ ...  
Կոթողն այս կաւ մինչեւ իյնայ մեղմաշառաչ ... :

1927

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՄԻՆ

— «Ապրէք, երեխէք,  
Բայց մեզ պէս չապրէք ...»

ՅՈՂՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Մեր օրը՝ մառ,  
Աւա՛ր,  
Խաւա՛ր ...

— Արեւըդ թող  
Ըլլայ երկա՛ր  
Ամա՛ռ ...՝  
Ըլլայ յաղթող,  
Ըլլայ տաքուկ  
Ու վառ,  
Զազո՛ւկ ... :

Մեր բովանդակ  
Կալուածն՝ ահա՛  
Անել վանդակ  
Ու ցո՛ւրտ,  
Չանծրո՛յթ ...

— Երկնից տակ լուրթ  
Թող բա՛րձր ըլլայ  
Բոյնրդ, Տըղա՛ս,  
Անհաս ...  
Բոյնդ՝ ամբաշէն,  
Ամպածըրար,  
Յաւէ՛րժ անառ,  
Այլ անտաղտուկ  
Ու շէ՛ն,  
Չագո՛ւկ ... :

Հողմաջախջախ  
Մեր թեւը՝ կա՛խ,  
Մեր թափն՝ անգօր,  
Մեր ճիզն՝ ունա՛յն,  
Մենք՝ կո՛յր  
Ուրուր ...  
Մենք թըռի՛նք ու՞ր ...

— Թող ըլլայ սո՛ւր  
Նայուածքը քու.  
Թող լայն  
Ըլլան  
Թեւերդ, հուժկո՛ւ.  
Թող մագիլներդ  
Ըլլան հատո՛ւ,  
Եւ անողոք՝  
Կըտո՛ւցը քու ...:  
Ճախրըդ հըգօր,  
Կայծակը զերթ,  
Ըլլայ մագոգ  
Սատղերու գոգ,  
Եւ յեղակարծ  
Խոյանքիդ տակ՝  
Հիմնայատակ  
Ու բիւրախոց  
Իյնա՛ն,  
Չագո՛ւկ,  
Իյնան համայն  
Որջ ու բայոց՝  
Անդա՛րձ,  
Անշուք ... :

Մեր բովանդակ  
Կալուածն՝ ահա՛  
Անել վանդակ  
Ու ցո՛ւրտ,  
Չանձրո՛յթ ...

— Երկնից տակ լուրթ  
Թող բա՛րձր ըլլայ  
Բոյնրդ, Տըղա՛ս,  
Անհաս ...  
Բոյնդ՝ ամրաշէն,  
Ամպածըրար,  
Յաւէ՛րժ անառ,  
Այլ անտաղտուկ  
Ու շէն,  
Չագո՛ւկ ... :

Հողմաջախջախ  
Մեր թեւը՝ կա՛խ,  
Մեր թափն՝ անգօր,  
Մեր ֆիզն՝ ունա՛յն,  
Մենք՝ կո՛յր  
Ուրուր ...  
Մենք թըռի՛նք ու՞ր ...

— Թող ըլլայ սո՛ւր  
Նայուածքը քու.  
Թող լայն  
Ըլլան  
Թեւերդ, հուժկո՛ւ.  
Թող մագիլներդ  
Ըլլան հատո՛ւ,  
Եւ անողոք՝  
Կըտո՛ւցը քու ...:  
Ճախրըդ հըզօր,  
Կայծակը զերթ,  
Ըլլայ մագոգ  
Ասաղերու գոգ,  
Եւ յեղակարծ  
Խոյանքիդ տակ՝  
Հիմնայատակ  
Ու բիւրախոց  
Իյնա՛ն,  
Չագո՛ւկ,  
Իյնան համայն  
Որջ ու բայոց՝  
Անդա՛րձ,  
Անշուք ... :

1932

## Վ Ե Ր Ե Լ Ք

Կը հեռանամ ահա նորէն,  
Յուպ ի ձեռին՝ մութ գիւղերէն,  
Ու կը լքեմ շաւիղն անգամ,  
Ու գլխաբաց ու լուռ կ'երթամ  
— Ինչպէս քուրմ մը դէպի բազին—  
Հազարասիւն, հազար գմբէթ  
Թաւուտներէն խաղաղաւէտ՝  
Ըսպասելով արեւծագին ... :

Շուրջըս՝ կանանց պրտերներուն  
Կը թաւշանայ օթոցն անհուն.  
Մերթ կը շիկնի՛ բիւր կոնածեւ  
Մայրիներուն կանանչը սեւ.  
Մերթ սաղարթներ կը փափրսան  
Մեղեգինե՛ր մեղրահոսան՝  
— Քաղցրատարա՛փ երգահանդէս,  
Որ ամպերէն կ'իջնէ կարծես ...

Եւ ամէն դի, վերէն, վարէն  
Խնկունիներ կը բուրվառեն ...  
Ու շոճերուն՝ երկնասըլաց  
Խոյակներէն անդին, յանկարծ,  
Կապտաստիճան բազնին վըրայ  
Կատարներուն՝ կը փողփողայ,  
Հանդիսութեամբ մեհենական,  
Հըրաշավա՛ռ արե՛ւ արքան ...

Ու կը խայտայ, ու կ'առլցուի՛  
Լեռը՝ լոյսով զըւարթագին.  
Կը թաւալի՛ դեռ վիհէ վիհ  
Խուլ արծազա՛նգը նըւագին.  
— Բայց սօսինե՛րը վերամբարձ  
Ու քարշեպներն հսկայական

Կը հեռանան միշտ դէպի ցած  
— Քայլերու տակ կը փոքրանան...

Որովհետեւ կը բարձրանամ  
ես դէպի սա՛րն հըրաշալի,  
Դէպի ձիւներն արեւահամ՝  
Որպէսզի սիրտս ալ չըհալի՛ր...  
Կը բարձրանամ ես հեւ ի հեւ  
Մինչեւ թեւեր հագնի հոգիս ...  
Նոր գազաթնե՛ր ծագին մինչեւ՝  
Աչքերու դէմ՝ անպարագի՛ծ ... :

1933

ԱՇՆԱՆ ԱՌԱԻՕՏ

Կ'ուրուագծուի հազիւ հազ անջրպետին ծիրն հեռուն.  
Արտի մը պէս մեղմավար, ծովը բիւրեղ՝ կը շողա՛յ.  
Վարդ երամակ մ'ամպերու՝ միջոցին մէջ կը լողա՛յ.  
Կը չըմըշկէ՞ սիւզն ըզգոյշ՝ քըմայքն ի վար ջուրերուն ... :

Օ՛ր քաղցրութիւնն առտըւան աշնանամուտ օրերուն ...  
Խաղաղութի՛ւնն օդին մէջ, ափերն ի վար, ջուրին վրայ ...  
Անիրական արեւելք — նարնջագոյն, մով քուրայ ...  
Ու մըշուշին մէջ՝ հեռուն՝ անցքն ուրուատիպ նաւերուն...:

Ալիքներու շնկոց միապաղաղ ու բարի,  
Որ կիսածայն զերթ համերգ մ'ափունքէ ափ կ'երկարի.  
Եւ, անհունը պարփակող նիշերու շարք համաչափ,

Առագաստնե՛ր որ, ջուրին վըրայ հանգչած անխուճապ  
Որորներու պէս անշարժ, հոն հազի՛ւ հազ կ'ընթանան  
Ու մերթ հովին դէմ՝ ցերմակ թեւերն իրենց կը բանան ...:

1929

ՈՒՐԵՄՆ, ԵՐԱԶ ...

Ուրեմն, Երա՛գ, դուն վաղուց երազ չէի՛ր ... Ժպտադէմ  
Դուն կ'ապրէիր քովս ի վեր. կը շնչէիր զաղտնապէս ...  
Եւ այժմ յանկարծ կը բացուի՛ս հեքիաթական զերթ պարտէզ  
Քայլերուս տակ յոգնաբեկ եւ հիացի՛կ աչքիս դէմ ...

Այս ի՛նչ հեղեղ է ծաղկանց, ի՛նչ շքեղանք, ի՛նչ եղեմ ...  
Ինչքա՛ն սաղարթ ու դալար հոն ուր աւազ էր կարծես.  
Լոյսի, գոյնի, ջուրերու հոգեպարա՛ր այգհանդէս  
Որ աւելի կ'աղուորնայ կարծես քանի կը դիտեմ ...

Ինչպէ՛ս եղաւ որ հոգիս չըզուշակեց ըզքեզ վաղ,  
Անո՛յշ Երազ, երբ կ'անցնէր ան՝ հովերէն տարուբեր ...  
Ես կո՞յր էի թէ աչքէս կը ծածկէին քեզ ամպեր ...

Ինչպէ՛ս եղաւ որ սիրոյդ շողերը քա՛ղցր ու չքնաղ  
Պոնարհեցան իմ վըրաս կենսանորոգ շունչ մ'իբրեւ,  
Ո՛վ հոգիիս երկինքէն փողփողացող ջի՛նջ արեւ ... :

### ԱՅՍՊԷՍ՝ ՍԵՂՄԷ՛ ԳՈՒՆՔԵՐՈՒՍ ...

Այսպէ՛ս՝ սեղմէ՛ քունքերուս՝ վարսերըդ նուրբ ու բուրեան,  
Եւ այգն անհուն աչքերուդ, ու քաղցրութի՛ւնը շրթանցդ  
Պարապնդեն թող հոգիս կախարդակա՛ն իբրեւ ցանց  
Մինչեւ իջնէ մեր վըրայ սուգն այս վերջի՛ն իրիկուան ...

Թող լըսեմ տրո՛փը սրտիդ, ու շունչըդ՝ սիւգ առտըւան՝  
Թող մեղմէ՛ տապն այտերուս. ու գերթ խորհուրդ, իբրեւ զանձ,  
Թեւերուս մէջ, կուրծքիս դէմ թող օրօրե՛մ, գզուե՛մ անծղ ...  
Այսպէ՛ս՝ ձուլէ՛ մատներուս մատներըդ սուրբ յաւիտեան ...

Այսպէ՛ս ... ի՛նչ փոյթ հիմա հրայրքն որ կը վառի ինձմէ ներս,  
Ի՛նչ փոյթ որ ջինջ ազունքիդ հրպան հագիւ իմ շրթներս,  
Ես կ'արբենա՛մ աւասիկ նայուածքիդ յո՛րդ լոյսին տակ ...

Այսպէ՛ս... ի՛նչ փոյթ նաեւ սո՛վն՝ ընկճող մարմինս ապրստամբ,  
Երբ կը շողա՛յ սէրդ իմ մէջ յաւէրժ արե՛ւ-արեգակ ...  
Երբ քու հոգի՛դ ունիմ ես ամբողջութեա՛մբ, լիութեա՛մբ ... :

## ՎԵՐԱԴԱՐՁԱՐ ԴՈՒՆ ՈՒՐԵՄՆ ...

Վերադարձա՛ր դուն ուրեմն այսպէս անչար ու անքէն,  
Ու կը թողո՞ւս ձեռքդ ափիս մէջ անվարան, քնքշութեամբ,  
Ու կը ծագի՛ն դեռ վրբաս ժպտուն աչքե՛րըդ անամպ,  
Ու կը ներե՛ս ինձ այնքան տարակոյսներս ապաքէն ... :

Դեռ կը մընա՞ն սաղարթներ ուրեմն այն շէն պուրակէն  
Որ բացուեցա՞ւ մեզ՝ առտու մ'անըրջակա՛ն շքեղութեամբ,  
Այլ եթէ զայն քանդեցին նախ իմ քայլերս ապրստամբ,  
Այդ՝ սիրոյս թա՛փն էր միայն, եւ այդ գիտե՞ս դուն արդէն...:

Իսկ եթէ մերթ ալ մարմինս եղաւ անգօր ու տրկար,  
Ակընկալեց, պահանջեց դեռ աւելի՛ն, աւելի՛ն ...  
Չըգողութի՛ւնն էր այդ լոկ սիրոյդ հըգօ՛ր արեւին ...

Բայց հիմա լո՛ւրջ եմ ահա, դարձեալ, հանդա՛րտ՝ ու յօժա՛ր  
Քեզ դիտելո՛ւ գերթ ծաղիկ մ՛ու շնչելո՛ւ քեզ՝ միայն ...  
Ու պաշտելո՛ւ քեզ այսպէս, հոգիի՛ս մէջ, լըռելեա՛յն ... :

## ՏԱՂ ԱՌ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

Եւ կ'ուզէր որ տակաւին ասելութի՛ւնը շըքեղ  
Ձի սըրէ սուրն իր ժանգոտ՝ պիղծ օրերուն անիւէն ...  
ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ

Ատելութի՛ւն, դուն յաղթակա՛ն ես ահա ...  
Դուն խորտակեր ես — սեւ ալիք յարահուն —  
Ներման, գութի թումբերն ամէն՝ շառաչուն,  
Ու կ'արշաւե՛ս հոգւոյս դաշտին մէջ ամայ ...

Հոգիիս դա՛շտը — հոն գիշեր է, աշուն ...  
Հոն կը յածիս դո՛ւն գերթ ըստուե՛րըս հիմա.  
Հոն մոլելիսինդը ժանտ՝ յաւէ՛րժ կ'ուռեանայ ...  
Հոն չի՛ երգեր այլեւրս ոչ մէկ թռչուն ...:

Ո՛վ Քէն, իմ տենչ, իմ սեւեռուն զաղափար ...  
... Սակայն ես այժմ, օ՛, այնքան խոնջ եմ, այնքան  
Անզօր՝ ու մո՛ւթ է, այնպէս մո՛ւթ՝ ապագան ...

Որ սոսկումով կ'ըսեմ — «Քերեւս՝ անծանօթ  
Այս տապն օր մը զի՛ս ըզգետնէ ննկաբար,  
Ինչպէս դարձած գինին՝ կաւէ իր անօթ ...»

1932

Վ Ա Ռ Ե Ր Ա Չ

Ամենուր լրուութիւն, ընդհանուր պարտութիւն  
ու նահանջ.  
Ճամբեցա՛ն աղբիւրներն, ամէն դի անջրդի,  
գորշ աւազ.  
Միայն դո՛ւն կը յուզուիս, կը ծըփաս իբրև ծով  
ալետանջ,  
Հըրատապ ու ժգնութեամբ կ'ընդվըզիս միայն դո՛ւն,  
վա՛ռ երազ ...

Ի՞նչ յոյսեր, տենչ ու սէր ընդածին՝ դողացին  
ու հանգան.  
Միայն դուն զերթ հրդեհ կ'արծարծիս, կը շատնաս,  
վառ երազ.  
Մինչ անցան, հեռացան հոգիէս հին իղձն'րը  
այնքան,  
Հոն կ'ապրի՛ս, կը տեւե՛ս, կը տիրե՛ս՝ միայն դո՛ւն,  
վա՛ռ երազ ...

Ու վարդեր թօշնեցա՞ն. տերեւներ աշնահար,  
ժանգահար ...  
Ամենուր ցուրտ աշուն ու քամի՝ մահագոյժ  
զանգահար.  
Միայն դուն անառիկ՝ հովին տակ, հովին դէմ  
կուրծք տըւած,  
Միայն դո՛ւն ես կանգուն, հաստաբուն, սէ՛զ բարախի,  
վա՛ռ երազ ...

Ամէն սէր կ'աղօտի. կ'անհետի ամէն իղծ,  
ամէն յուշ,  
Այլ յամառ ու պայծառ կը շողաս հանապազ,  
վա՛ռ երազ ...  
Ու կ'անցնիմ նաեւ ես՝ անծանօթ, անանուն  
ու անյուշ,  
Այլ դուն միշտ կը մընաս տեւական, դիւթական,  
ու անհա՞ս,

Ու կ'ապրի՛ս մշտարթուն՝ միայն դո՛ւն, միայն դո՛ւն,  
վա՛ռ երազ ...:

1934

## Մ Ե Ն Ե Ր Գ

Զիւնափառ լերան  
Մը կողերն ի վար  
Թաւալող՝ պայծառ  
Ու որոտածայն  
Ջրվէժի մը մօտ՝  
Խոնաւ ու մամռոտ,  
Խաւա՛ր, ամայի՛  
Ա՛յր մ'ունենայի ...

Ցամաքէն հեռու,  
Կապոյտ ու խորունկ,  
Անհուն ծովերու՝  
Հեղուկ - յեղյեղուկ  
Քըմայքին գերի,  
Լո՛ւռ, թափառայա՛ծ  
Առագաստ պարզած  
Նա՛ւ մ'ունենայի ...

Կամ գիւղէն անդին,  
Ծըմակի մը խոր՝  
Խաղա՛ղ, անժըխոր,  
Դալար ջըրափին՝  
Ծեր ընկուզիի  
Մը տակ՝ ցա՛ծ, մըխո՛տ,  
Մարդու անձանօթ  
Հի՛ւղ մ'ունենայի ... :

1924

## Ը Ղ Ձ Ա Ն Ք

Աստղահեւ գիշեր. — լըռի՛կ, առանձին  
Հոգիս կ'ըսպասէ երազ սէրերու .  
Կը ցանկայ մատներ որ մե՛ղմ կը սահին  
Ճակտիդ վըրայէն, առա՞նց հըպելու ...

Կը ցանկայ բուրեան շրթներէ տամուկ  
Ըմպել հեշտանքով նեկտարն անապակ.—  
Կը ցանկայ թաղուի՛ւ, սուզուի՛ւ անշըշուկ,  
Մետաքս վարսերու կոհակներուն տակ ...

Կը ցանկայ թեթեւ թեւեր ձիւնագեղ,  
Որ կը կաշկանդեն ցանցի մը մէջ նեղ՝  
Շարժումներդ ամբողջ զգուանքով մ'անհուն,

Ու՛ սի՛րտ մը, զարնող՝ սըրտիդ դէմ՝ ուժգին,  
Աչքե՛ր որոնց մէջ ցոլանայ հոգին  
Կոյսի մը աղո՛ւ, կոյսի մ'անանուն ... :

1923

## ԿՇՏԱՄԲԱՆՔ

Գիտնայի՛ր, ես ի՛նչ խոր  
Անձկութեամբ, ամէն օր  
Քու համբուդ վըրայ, լո՛ւս  
Ըսպասեր եմ ի զո՛ւր ...

Գիտնայի՛ր, իմ անգո՛ւթ,  
Ես ինչպէ՛ս ամենուր  
Փընտըռեր եմ ի զուր  
Բոցն անո՛յշ աչքերուդ ...

Ու ցայգուն, դուռըս փակ,  
Երազիս անձնատուր  
Ու տենչիս հետ մինակ,

Անհրնա՛ր կարօտէս,  
Գիտնայի՛ր, ա՛խ, ինչպէ՛ս  
Տառապեր եմ ի զուր ... :

1928

## Ն Ա Ի Ե Ր Գ

Մինչ ջուրերն ի վար  
Կարծես կը տեղար  
Տարափ մը ծաղկի,

Քու հրրեշտակի  
Դէմքիդ՝ կը շողար  
Լո՛յսը լուսնակի ... :

Առազաստ մը սեւ  
Կը բարախէր թեւ  
Ու կ'ըշտապէր տուն ...

Աստղերուն ներքեւ  
Այդ գիշեր՝ արթուն  
Էինք ես ու դուն ... :

Ու մեր շուրջն ու մօտ  
Կ'երգէին տարփոտ  
Կոհակներ, գինով ... :

Ո՛, լուսնի լոյսով  
Մեր հեշտանքը ծով,  
Մինչեւ առաւօտ ... :

\*  
\* \*

Մինչ ջուրերն ի վար  
Կարծես կը տեղար  
Տարափ մը ծաղկի,

Շրթունքդ էր սրկիհ,  
Սիրտդ՝ սարբինայ  
Ու սէ՛րըդ՝ ցըքի՛ ...

Եւ այդ անհրնար  
Քաժակէն՝ խանդոտ  
Սիրտըս կ'արբենա՛ր ...

Ո՛վ անհաս կարօտ,  
Սիրտըս կ'արբենա՛ր՝  
Մինչեւ առաւօտ ... :

Մինչ ջուրերն ի վար  
Կարծես կը տեղար  
Տարափ մը ծաղկի ... :

1926

## Ա Ն Դ Ո Ղ

Քակ բոլորած՝ կանթեղին դուրս ինկած լեզուն ..  
Ու մահիճներ — տապանաքա՛ր — շարան շարան.  
Ու ծաղկատի կրնոջ մը դէմքն — Աւետարա՛ն —  
Աննիւթակա՛ն, կարծես ինք իր լոյսով օծուն ...

Ու մահիճներ — անշարժ ու սառ՝ որմերու տակ ...  
Սըրահին մէջ անդորրութեան հեւք մը տըկար.  
Նիրհը բաթիւ-բաթիւ կ'իջնէ ձեղունն ի վար,  
Կ'իջնէ ըզգոյշ — մեռելութի՛ւն լեռնակուտակ ...

Եւ հծծիւններ, եւ լրուութիւն պարբերաբար,  
Ու կանացի դէմքի խուսում մահնէ մահիճ.  
Ռմբըն ի վեր ցընորակա՛ն ստուերապար ...  
Անձո՛ւկ, անձո՛ւկ, անդոհակա՛ն ու լայնալիճ ... :

## Ո Ր Բ Ո Ւ Հ Ի Ի Մ Ը

Կը բաւէ՛ թարթիչնե՛րրդ աղուոր տամկացան,  
Ու թրթռաց քաղցրը ձայնդ ակաղձուն թախիժով,  
Ու գլխի՛կըդ բումայթ — դալկագեղ լոյսի ծով —  
Կը բաւէ հակեցաւ՝ բե՛կ ծաղկի մը նրման ...

Մոռցի՛ր, հէ՛ք մանկուհիս, ստուերնե՛րը այնքան ...  
Մոռցի՛ր սեւ կարաւանն որ անցաւ ցաւատանջ ...  
Համարէ՛ թէ անցեալն ահաւոր մղձաւանջ  
Մըն էր սոսկ, ու դարձի՛ր դէպի վառ ապագան ...

Ու փթթի՛ թող երանգ մ'այտերուդ վրայ նորէն.  
Թող ցնդի՛ սարսափիդ յիշատակն հըրատապ.  
Թող զըւարթ երազներ քեզ դարձեալ օրօրեն ...

Եւ յանձնած արեւին խոնջ մարմնիկդ ազազուն,  
Ջրգէ՛ որ թաւշաբիբ աչուրներդ երազուն  
Շողշողան վերըստին անապա՛կ քաղցրութեամբ ...:

1925

## Ա Ղ Օ Թ Ք

ՀԻՒԱՆԳ ԱՂԶԿԱՑ ՄԵ ՀԱՍԱՐ

Անոր, Տէ՛ր, որուն ջինջ թովջութեամբ, ատենօք,  
Սրտիս լերկ ժայռերէն աղբիւրներ բղխեցան —  
Աղբիւրներ յորդառատ ու վրձիտ, քաղցրածայն ...,  
Շըռայլէ՛ բարութեամբ բոց արեւդ հրաբորբոք ... :

Խընայէ՛ անոր, Տէ՛ր, որուն սէրն իբրեւ մոգ  
Բացաւ դո՛ւռը երբեմն հոգւոյս փակ գանձատան ...  
Եւ որուն սխրալի՛ ներշնչմամբ՝ հրաշագան  
Տաղերգներ թրթռացին քընարին այս ի գոգ ... :

Յամբեցա՞ն արդ ջուրերն ... ու քընարն է լըռած ...  
Գանձատան մուտքն յաւէտ հիմա փա՛կ է կրկին ...  
Սակայն, Տէ՛ր, դուն գիտես որ այս կայծն ըսպառած

Լոկ անո՛ր շունչին տակ բոցկլտաց օր մ՛ուժգին,  
Եւ հոգիս — բու շընորհդ — իմացաւ նա՛ միայն ... :  
Տէ՛ր, այդ շունչն անձկալի չըմարի՛ ընդունայն ... :

## Մ Ե Ն Ա Գ Ա Ր Ը

Ահա սիրտըս փա՛կ ամէնուն դիմաց.  
Եւ արտաքսեցի՛ ով որ ներսը կար ...  
Եւ հիմա կ'երթամ՝ անյո՛յս մենագար՝  
Արահետներէ լուռ ու միգամած ... :

Այս քանի՛ անգամ՝ երազ, գաղափար  
Ու սէր մոխրացան, ցնդեցան անդարձ ...  
Ու սիրտս՝ որ այնպէ՛ս շատերուն էր բաց՝  
Արիւնոտեցա՛ւ սիրտերու դէմ քար ... :

Ու չեղա՛ւ, չեղա՛ւ հոգի մը պայծառ,  
Որ գէթ միւսներէն ըլլար քի՛չ մը վեր...  
Միշտ ունայնութիւն, դիմակ ու դաւ էր.

Հոգի մը չեղա՛ւ որ զիս հասկընար.  
Եւ հոգիս — վաղո՛ւց անբընակ կղզի —  
Արդ՝ մո՛լթ ալեաց տակ քիչ-քիչ կը սուզի...:

## ԵՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՐԵԼԻ

Կրնա՛ր ըլլալ, պզտի՛կ վրտակ,  
Որ ջուրերդ օր մը խայտային  
Իմ սաղարթիս ստուերին տակ,  
Եթէ աշունն անժամանակ  
Զայն չը հնծէր... ու գարնային  
Հովերն եթէ՛ կորաքամակ,  
Տերեւագուրկ ու ծեր կաղնին  
Վերընծիւղել կարենային ...

Եւ կաշըմբուռն ոստերս, աղուոր  
Պզտիկ վրտակ, իբրեւ թռչուն  
Հրպանցէին թերևըս օր  
Մը քնքշու թեամբ՝ քու պաղպաջուն,  
Քու կենսաւէտ, քու դողդոջուն  
Ծոցդ՝ երջանիկ ... եթէ այս չօր  
Սպառաժին՝ արմատն իմ խոր  
Զիս չը գամէր ընդերքներուն ...

Քայց կ'ընթանաս, ա՛յ իմ պայծառ  
Պզտիկ վըտակ, միշտ երգելէն՝  
Քու ծաղկասփիւռ ամերդ ի վար,  
Ու կը կանչես զիս անդադար,  
Ու կը տանջե՛ս ... մինչ ես, վերէն,  
Կը դիտեմ անցքդ հովտին խորէն,  
Ու սին յոյսեր զիս կ'օրօրեն.  
Այլ մերձենալ Քեզ չե՛մ կրնար ... :

## Ա Ն Դ Ա Ր Զ

Կը յիշե՛ս, հոն, երբեմն՝ յատակ ջուրերուն քով,  
Ստուերին մէջ մայրիներուն վաղընջական,  
Միմեանց այնքա՛ն կ'ըլլայինք մօտ, ո՛վ Սէր, այնքա՛ն՝  
Որ թեւերս իմ կը պողթկայի՛ն գորովանքով ...

Մերթ կը հանգչէր վարսերուդ լոյսն ուսիս վըրան,  
Կը լեցուէին աչքերըդ քա՛ղցր երազանքով,  
Կը թնդային սիրտերը մեր՝ հըզօ՛ր կեանքով,  
Մեզ կը բացուէր կարծես դըրախտ մ'երանական...

Ինչպէ՛ս եղաւ որ արթնցանք այդ երազէն.  
Ճակատագիրն ինչպէ՛ս բաժնեց մեզ իրարմէ  
Ու մեր միջեւ լարեց միջոցն ըսպառագէն ...

Կարծես երէ՛կ էր ... կուրծքիս դէմ կծկըւեցա՛ր,  
Ու կ'ուզէի՛նք որ ժամանակը կանգ առնէ ...  
— Ո՛վ յիշատակն այդ օրերուն լուսապայծառ ...:

## Ե Ր Բ Տ Ա Կ Ա Ի Ի Ն ...

Երբ տակաւին սէրդ երազ մըն էր հագիւ, հագիւ յոյս  
Մը՝ որ հոգիս կը ցօղէր աստղի մը պէս հեռաւոր,  
Քու լուծըդ քա՛ղցր էր, քանի որ գէթ աչքե՛րըդ աղուոր  
Կը թարթէին միշտ իմ դէմս, իբր աստուշան մեղմալոյս...:

Այնուհետեւ քայց այնքա՛ն դուն մօտեցար իմ հոգւոյս,  
Որ թովջանքիդ հուրն ինկաւ օրերուս մառ վիհին խոր.  
Ան հոն մեծցա՛ւ, աճեցա՛ւ, արեւացա՛ւ օրէ օր  
Ու ծագեցա՛ւ վերջապէս — հրրաշավա՛ռ արշալոյս ...

Բայց արդ ինչպէ՛ս՝ խելայեղ ապրումներէ վերջ այնքան,  
Երբ իմ թաքուն գորովիս ակերը հեզ ու անծայն՝  
Մեծաշառաչ յորդեցա՛ն, ջրվէժացա՛ն, ծովացա՛ն,

Ըսէ՛, ինչպէ՛ս ապրիմ ես, երբ ալ չըկա՛ս, սիրակա՛ն ...  
Ինչպէ՛ս՝ կ'իջնէ երբ մշուշն իմ շուրջ, մօտիկ եւ հեռուն,  
Ու կը ծածկէ՛ քիչ առ քիչ ուղին արե՛ւ-օրերուն ... :

## ՏԱՂ ԱՌ ՄԵՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Մենութիւն, քեզ կարօտ էի վաղուց ես այնպէ՛ս ...  
Կ'ըսպասէի քեզ, ինչպէս ուժաթափ բոյս մը՝ ջուրի,  
Եւ էութի՛ւնըս ահա զրգանքիդ մէջ կը խըրի՛,  
Երբ վերադա՛րձըդ այլեւս անկարելի՛ էր կարծես ...

Այս ի՛նչ անդորր իրիկուն՝ միջօրէն վերջ տօթակէզ ...  
Ունայնութեան ցանցերէն ձերբազատուած՝ զերթ զերի  
Թռչուն՝ հոգիս լըռութեան մէջ խելացնոր կը թառի՛ ...  
Այս շընորհքին համար, Տէ՛ր, գոհութիւն ո՛ղջ հոգիէս ...

Ով բերկրութի՛ւն — վանել դուրս սրտէդ ամէն արծագանգ,  
Եւ իբրեւ խոնջ ուղեւոր մը ճամբուն մէջ առած կանգ,  
Ներկայութիւնն այլոց բեռ մը գերթ նետե՛լ ուսէդ վար ...

Ով հեշտութի՛ւն — ըզգալ շուրջդ ամէն իր լուրջ, հոգեզգած...  
Ու չը լըսել մանաւանդ ալ ո՛չ մէկ բառ, ո՛չ մէկ բառ,  
Այլ ունկնդրել քաղցրութեամբ՝ ժամերուն քա՛յլն յամբընթաց...

1930

## Մ Ռ Ա Յ Լ Պ Ա Հ Ե Ր

... ծովածաւալ  
Իրիկուան մէջ անհետելու յոյսն ունենալ ...  
ՄՐԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Մթնշաղին, ափին վըրայ, քաղքէն հեռու,  
Խութերուն տակ, ուր կուլայ ջուրն իր վիշտը խոր,  
Թափառայած որպէս ուրու՝ խորհրդաւոր՝  
Հաստի մը մէջ յանձնըիլ սե՛ւ կոհակներու ...

Ու ձրգե՛լ որ աստղերու սառ զգուանքին տակ,  
Մուխերու պէս անօսրանա՞ն, ցնդի՛ն բոլոր  
Ցանկութիւններդ հիւանդ, իղձերդ ալ ախտաւոր,  
Ու տարտղնէ՛ հոմն՝ երազիդ ածիւնը տաք ...

Ձրգել որ շո՛ւրջըդ կոհակներ լան, շառաչեն,  
Ու սրգայ ծո՛վը՝ ծաղկատի կեանքիդ համար ...  
Մըռայլ ու սէգ՝ սահիլ անցնիլ յորձանքն ի վար

Ու կորսըւի՛լ մառախուղին, մութին մէջէն ... :  
Մթնշաղին, ափին վրրայ, քաղքէն հեռու,  
Լաստի մը մէջ յանձնըւիլ սե՛ւ կոհակներու ... .

1925

### ՄԵԾԱՐԵՆՅԻ ԳՐԻՆ ՎՐԱՅ

Ահա՛ մատեանն ուր կ'ապրի Բանաստեղծի մը հոգին,  
Որ եւ տանիլ կրնայ մեզ — կախարդական ուսովիրայ —  
Երբեմն բոց արեւին, մերթ աստղերուն շափիւղայ  
Ու մերթ վընի՛տ ձայներու հրրաշակա՛ն հրմայքին ...

Կ'ուզե՞ս, այսպէ՛ս, միասին զայն թղթատենք հրճուագին...  
Տե՛ս ... ծառերէն վար այնտեղ գոյն-գոյն ծաղիկ կը տեղայ,  
Մինչ նաւակներ կը սահին ծրփուն ծովի մը վրրայ,  
Ու կ'երգակցի՛ սըրասըինզն՝ անտառին բամբ նըւագին ...

Շրթաքարեր կ'արտասուեն հոն անծաւի մը մէջէն,  
Ուր ճաճանչներ երփներանգ կ'ընդթափանցեն մերթ զիրար  
Ու մերթ լոյսէ՛ կայլակներ գուռերու մէջ կը հնչեն ...

Հոն ամէն ծիր կ'ըզգենու ծիածանում մը յստակ,  
Ու, մինչ տակաւ կը սուզուինք արբեցումի լիճն ի վար,  
Հոն կը ծիւնէ՛ ամենուր լուսնակի լոյս ըսպիտակ ... :

1935

#### Կ Ա Ր Օ Տ

Մինչ երազներով բեռնաւոր կ'իջնէ մութն անպարագիծ,  
Ինծի կը թըւի թէ դրրանս ետին ձայնըդ կը դողայ ...  
Ու խուցըս մըռայլ՝ լեցուած արեւով, լոյսով՝ կը շողայ,  
Եւ հոն կը բուրէ՛ ծաղկած՝ նշենին բա՛ղջը անըրջանքիս ... :

Մերթ ինձ կը թըւի թէ դրրանս ետին ձայնըդ կը դողայ,  
Ու մութ անկիւնէ մը զիս կը փորձէ՛ դիմաստուերդ անբիծ,  
Ու կը ծանրանան ջերմ ու լուսաւոր թեւերըդ վրզիս,  
Ու կուրծքիս դիմաց ուժգին սեղմըւած կուրծքըդ կը հեւայ...

Բայց լուռ անկիւնէ մ'ի գուր կը փորձէ զիս դէմքըդ անբիծ.  
Ես գիտե՛մ, ցընորք ես դուն անողոք ու պիտի փախչի՛ս,  
Եւ պիտի անձուկն իր լայն թեւերով իջնէ՛ իմ վըրայ ...

Ես գիտե՛մ, ցընորք են լոկ ու պատրանք՝ աչքերըդ ժպտուն.  
Գիտե՛մ, ծով կարօտն իմ վըրաս նորէն պիտի ծանրանայ,  
Եւ պիտի մընամ՝ ակնարկըս կէտի մը շուրջ սեւեռուն ... :

1924

## Տ Ր Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս երեկոյ, տրտո՛ւմ՝ տրտո՛ւմ է հոգիս :  
Ամէն անգամ որ բաժնըլի հարկ ըլլար,  
Կը լըքէիր մատներուս մէջ ձեռքդ՝ երկա՛ր,  
Ու լուռ գգուանքն այդ երջանի՛կ կ'ընէր զիս ...

Կը մեկնէի քովէդ ուրախ ու ժպտուն.  
Աստղերու հետ կը խօսէի հրճուանքէս ...  
Հազար համբոյր կը համբէի դէպի քեզ,  
Ու գարուննե՛ր կ'երազէի ցայգն ի բուն ...

Բայց այս գիշեր դուն զըլացա՞ր ինձի՝ այդ  
Ձերմիկ հրպուճն որ զիս կ'ընէր երջանիկ . .  
Բիբերս ի զո՛ւր սեւեռեցան քու վըրադ ...

Եւ անձկութիւնն այժըմ հիրան ու ժանիք՝  
Կը մխուր խո՛ր՝ միսերուս մէջ ու գանկիս ...  
Ո՛հ, այս գիշեր տրտո՛ւմ՝ տրտո՛ւմ է հոգիս ... :

1924

### Յ Ի Շ Ա Տ Ա Կ

ՕՐ. Ա. Գ. Խ

Կը յիշե՞ս, Սեդա՛,  
Այդ հին ցնձատօն  
Անոյշ երեկոն  
Գետափին վըրայ ...

Այդ՝ անվերադարձ,  
Անմոռանալի,  
Բուրումներով լի  
Մայրամուտն ու՝ թաց

Ափերէն հեռու,  
Մրտենիներու  
Դրրախտանըման  
Պուրակն անսահման,

Ուր մենք, քովէ քով,  
Հեռու ընդհանուր  
Թոհ ու բոհէն՝ լո՛ւռ,  
Ու քա՞ղցր հրճուանքով

Թաւուտէ թաւուտ,  
Կածանէ կածան,  
Թեւերուս անձայն  
Գգուանքն ուսերուդ՝

Թափառեցանք՝ մո՛ւթ  
Սաղարթներուն տակ՝  
Քու ծո՛ւլ վարսերուդ  
Համար՝ մանիշակ

Ու խնդածաղիկ  
Գտնելու յոյսով ... :  
Դուն, այդ խաղաղիկ,  
Շոյո՞ղ, հոգեթո՛ւլ

Իրիկունը՝ դեռ  
Կը յիշե՞ս, հիմա.—  
Այդ հոգեհըմայ  
Թափառումը մեր

Գետափին վըրայ՝  
Կը յիշե՞ս, Սեդա՛.—  
Այդ վարդ ու մեկոն,  
Թաւի՞շ երեկոն

Կը յիշե՞ս, Սեդա՛ . . .

1925

## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Խոնջէնքիդ յաւէտ փա՛կ օթեւան ...  
Անմատոյց էտըլվայս հոտեւան ...  
Ծիր կաթին՝ խորն երկար գիշերուան ...

Օրհնեալ հաց՝ որուն չե՛ս արժանի ...  
Միշտ մորմօք, երբեմն յո՛ւշ ընտանի  
Ու մերթ՝ բո՛յր զոր քամին կը տանի ...

Եւ արեւ՝ ամպի տակ թաքթաքուր ...  
Յորդառատ ու վրճի՛տ, ու մաքո՛ւր  
Այլ անհա՛ս՝ բարձունքէն ժայթքող ջո՛ւր...

Նա՛ւ, մեկնա՛ծ՝ երբ կառչեր ես հողին ...  
Գիւզ՝ որուն կորուսե՛ր ես ուղին.  
Եւ յոյսե՛ր, իղձե՛ր ծեր ու դեղին...:

1933

## Տ Ե Ր Ե Ի Ա Ռ Ա Փ

... Տերեւերը դեղին  
Պատեցին իմ ուղին ...  
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

Ամպերն իջան մինչեւ գետափ.  
Լոյսերն ամէն ալ ջուրն ինկան,  
Ու երազներն անիրական՝  
Հեղձամղձուկ ու գունաթափ ...

Սուր հովին տակ, որ կուտայ չափ,  
Նաւերն անցան՝ աստանդական.  
— Ոստերը լերկ կը հեկեկա՛ն ...  
Տերեւաթա՛փ, տերեւաթա՛փ ...

Ծառերուն տակ՝ մահու շուրջպար,  
Նաւաբեկում՝ ջուրերն ի վար,  
Եւ ամենուր դեղին խուճապ ...

Եւ ի դերեւ ելած յոյսեր,  
Ինկա՞ծ տերեւ-տերեւ իղձեր  
Օրհասակա՞ն եւ ուժաթափ ... :

1935

Յ Ա Յ Գ Ե Ր Գ

Ամպերէն, ծառերէն  
Կը տեղայ լուսնի լոյս.  
— Այս ի՞նչ տօն է նորէն ...  
Կ'երգէ ցայգն համօրէն,  
Կ'աղօթեն ծառ ու բոյս ... :

Ու վերէն շիթ առ շիթ  
Կ'իջնէ ցօղ, կ'իջնէ սէ՛ր ...  
— Ցայգն է բաղք ու վրճիտ—  
Ի՞նչ երազ, երազիդ  
Թե՛ն՝ ուսիդ կ'ըլլայ տէր ...

Մենք այստեղ ժամադի՛ր ...  
Ի՞նչ երազ, իմ Անո՛ւրջ,  
— Երգ մ'է սիրտս ու փանդիւ՛  
Ու սրտիդ ունկնդի՛ր  
Կ'արբենա՛յ լուռ ու մունջ ...:

\*  
\* \*  
\*

Ոստերէն բարձրադիր  
Յարատեւ լուսանձրեւ,  
Խարշափնե՛ր, փսփրսո՛ւք ...  
— Երկու սիրտ՝ ծնրադիր ...  
Երկու շունչ քաղցրահեւ,  
Ու ձուլուա՛ծ երկու շուք ... :

## ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Տըւիր սէրդ՝ անծանօթ անցորդին, խե՛նթ տըղայ,  
Եւ հիմա կ'ըսպասես անձկալի իր դարձին.  
Դուն կ'երթաս՝ տենչերուդ բեռն ուսիդ, առանձին.  
Միայն զինք կ'որոնես ամենուր, ամէն պահ ... :

Կը տեսնես զայն յանկարծ ... կը դողաս ակամայ.  
Դուն գերի՛ն ես իր մութ աչքերուն թովչանքին ...  
Բայց ան դեռ անգիտակ, անտարբեր քու հրայրքին,  
Ակնարկի մ'ըսփոփանքն իսկ քեզի կը զլանայ ...

Ու երբեմն իր հետքէն կը քայես անձկութեամբ,  
Կը ցանկաս խենթի պէս որ կենայ, ըսպասէ  
Ու ձեռքիդ մէջ ձրգէ՛ իր մատնե՛րը լուսէ ...

Սակայն չե՛ս յանդգնիր վրդովել սիրտն անամպ ...  
Կը թողուս որ անցնի ան հրպարտ, անխրոով,  
Ու նորէն կ'ըսկըսիս տանջըւիլ օրերով ... :

1927

## Ա Ն Վ Կ Ա Ն Դ Ը

Ես քեզ վաղո՞ւց կը սիրէի եւ կը սիրե՞մ  
դեռ, միշտ, հիմա.  
Ինչքան ալ դուն դէմքըդ ծածկես՝ կը ցոլանայ  
լոյսդ իմ վըրայ.  
Ինչքան ալ խոր զահավիժիմ, դուն կը վրկե՞ս  
զիս ակամայ...  
Ես քեզ վաղո՞ւց կը սիրէի եւ կը սիրե՞մ  
դեռ, միշտ, հիմա:

Ինչքան ալ լուռ արհամարհանքդ յամառօրէն  
սիրտըս տանջէ,  
Քաղցրամրմունջ աղբիւրի պէս ձայնդ հողւոյս մէջ  
կը կարկաջէ.  
Դուն զիս կ'ատե՞ս ... բայց ամենուր, մի՛շտ քու հոգի՛դ  
զիս կը կանչէ,  
Ինչքան ալ լուռ արհամարհանքդ յամառօրէն  
սիրտըս տանջէ:



Անցեալն իրօք թէեւ մեռա՞ծ է այսօր,  
Բայց ես կ'օրհնեմ իմ տառապա՞նքըս բոլոր  
Ու մանաւանդ Ան՝ որ տըւա՞ւ ինծի զայն,

Զի ներկայի անապատին մէջ՝ ունա՞յն  
Կրկնեւեւոյթ՝ կայ յիշատակըդ, Աղուո՞ր,  
Եւ յիշատակըդ իսկ անո՞յշ է այնքան ...

#### Գ Օ Ս Ծ Ա Ղ Ի Կ

Դուն ի՛մս ես, գօս ծաղիկ անանուն ...  
Իր շրթներն հըպան քեզ զերթ ծիծառն.  
Բաժակիդ մէջ թրթռաց սիրոյ լարն ...  
Հոն ինկաւ իր ժրպիտն երագուն:

Կը յիշե՞ս, թարմ ծոցիդ մէջ՝ նըկուն  
Մեր ակնարկը մընաց գիրկընդխառն ... :  
— Խընայէ՛ իրեն, Տէ՛ր, համը դառն  
Յափրանքին՝ ճաշակուած միրգերուն ... :

Անհրճնար խոստումի սուրբ դամբան,  
Դուն իմս ես, իմ կամքիս ես հըլու,  
Ինչ որ ան երբեք չէ ըլլալու ...

Բայց քեզմով ես հարուստ եմ ու զոհ,  
Գո՛ս ծաղիկ, իմ տարփանքս իրեն զոհ ..  
Միայն, թող չը մթնէ՛ իր ճամբան ... :

## Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն

Խաւարն անխռով դաշտն ըսքողեց.  
Ճամբուն վրայ բիւր լացող ուռի.  
— Ծղրիթներուն երգը կ'ուռի ...  
Ծղրիթներուն երգը, կարծես,  
Զի՛լ կարկաչիւն մըն է ջուրի ...

Հովն հերարծակ կը թափառի  
Արտերուն մէջ ու ծառերուն,  
Ու թուփերուն մերթ կը փարի ...  
— Երգը զինո՛վ ծղրիթներուն  
Համանըւազ մ'է կիթառի ...

Ծառաստանի մը կատարին  
Կը վարանի լուսինն արծաթ ...  
— Կայծռուիկներ կը դեգերին,  
Ու ծղրիթներ կը կերկերին  
Արտերուն մէջ մանուածապատ ... :

Խաւարն անխռով դաշտն ըսքողեց.  
Ճամբուն վրայ բիւր լացող ուռի.  
— Ծղրիթներուն երգը կ'ուռի'...  
Ծղրիթներուն երգը, կարծես,  
Ձի'լ կարկաչիւն մըն է ջուրի ... :

1927

Մ Ո Ր Մ Ո Ք

Երէկ գիշեր  
Տարեդարձի  
Իրիկուն էր.

Երէկ գիշեր  
Ճակատն այնքան  
Դալուկ ունէր,  
Որ սոսկացի' ...  
Եւ կը դողա'ն  
Շրթներըս դեռ...

Երէկ գիշեր  
Հանդիպեցաւ  
Մեր ծառին դէմ  
( Դեռ կը յիշէ'ր ... )

Բարեւեց լուռ,  
Բայց չը կեցաւ,  
Որ չը տեսնեմ՝  
Հիազարհուր՝  
Թէ ունէր ցաւ,  
Թէ կը թօշնէ՛ր ...

Բայց ես տեսա՛յ  
Իր դէմքը նուրբ,  
Կարծես մոմէ ...  
Տեսա՛յ տժգոյն  
Մատները սո՛ւրբ,  
Երէկ գիշեր ...  
Եւ կը լեցուին  
Աչքերըս դեռ ...

Տարեդարձի  
Իրիկուն էր  
Երէկ գիշեր ...:

Ն Կ Ա Ր Դ

Այս թղթիկը չնչին,  
— Բու նըկարդ — ո՛վ Երագ,  
Որ՝ փոխան արքենի  
Հասակիդ, կը հեւայ  
Մատներուս տակ հիմայ,  
Կը պահե՛մ հանապազ  
Ձերթ մասո՛ւնը սրբենի,  
Ձերթ աճի՛ւնը վերջին  
Մեր անա՛փ անուրջին...

Եւ ամէն իրիկուն  
Մինչ աչքերս՝ երկիւղած  
Կարօտով կը յառին,  
Ժրպիտովդ ակաղձուն  
Ու լոյսով թրժըւած  
Այդ անո՛յշ նըկարին ...

ես յանկարծ կը յիշեմ  
Երեկոն ուր՝ քումայթ  
Նայուածքէդ՝ հոգւոյդ շէմ՝  
Կշտամբա՛նքը խաւար  
— Անողոք խղճի խայթ —  
Հոսեցա՛ւ դէպի վար ...

Կը յիշե՛մ, կը յիշե՛մ ...  
Բայց ազահ հրճուանքով  
Կը պահեմ սրտիս քով,  
Կեանքիս պէս կը պահեմ  
Նըկարիկդ այս յետին,  
Եւ այսպէս--ով պատրանք--  
Խորն հոգւոյս անդունդին,  
Կը թրթռայ վերըստին  
Քիչ մը յոյս... քիչ մը կեանք...

Ու պահեմ պիտի ես  
Յաւիտեան՝ մոլեգին  
Նախանձով, խենթի պէս՝  
Նըկարիկդ այս, ո՛վ Կին,  
Ուր ինձի՛ կը ժպտին  
Աչուքնե՛րդդ՝ կրկին ... :

## Մ Ե Ռ Ե Լ Ո Յ Ի Գ Ի Շ Ե Ր

Ահա՛ կը բացուի մատեանը դեղին ...  
Ահա՛ ուրունքը կը սողան չորս դին ...  
— Ո՞ւր կ'առեւանգէք զիս, տանջող յուշեր,  
Թողէ՛ք զիս՝ այրող ճակատքս հովին,  
Թողէ՛ք զիս մինակ, թողէ՛ք այս գիշեր ... :

... Բայց անհունորէն յամրաքայլ ու լուռ,  
Սրգաւոր կիներն ու վրտիտ տղաքն,  
Որ կ'անցնին նոճեաց մթին ու թափուր  
Ճամբէն՝ քողերով գիշերուած համակ,  
Ինչքա՛ն անմուռուկ կը տանին, եւ ու՞ր ...

Կ'ըսեն— «Կուռի մէջ ու զէն ի ձեռին,  
Ու բանտերու խոր, ու գաղթի օրով՝  
Նոյն անկարելի երազը սրտին՝  
Ինկած քաջերու անյայտ շիրիմին,  
Ինկած զոհերու փոսերուն խըռով .. ?»

Բայց կը չըքանա՞ն ուրուները մինչ,  
Մինչ կը խաղաղի շիրմատան ուղին,  
Մութ հոգիիս մէջ՝ այս մութ գիշերին՝  
Ահա՛ կը հնչէ գո՞ռ, հրգճ՞ր ու ջինջ,  
Ո՛վ Բէն, գըրոհիդ շեփո՞րն ահադուինչ ... :

1923

## Բ Ա Յ Ա Տ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Համապայծառ բոց արևիդ շողշողաց լոյսն  
ինձմէ՛ հեռու ...  
Ես չարքեցայ անմահական քու բաժակէդ  
ամբրոսայեռ.  
Իմ՝ լիառատ քու սեղանէդ եղան բաժի՛նըս  
փշրանքնե՛ր ...  
Եւ ընդերկար տառապեցայ ես՝ քըմայքիդ,  
կամքիդ հըլու:

Ես ունէի երկնածիր հո՛ւրը՝ սակայն՝ բորբ  
երազներու.  
Ես նայուածքէ մը խորասոյգ՝ ծաղկեցուցի  
շէն դըրախտներ.  
Ես փետուրով մը նոյն իսկ մերթ սաւառնեցայ  
աստղերն ի վեր,  
Ու փշրանքներս փոխեցի մեր Շիրակայ՝  
ամբարներու...

Որպէսզի բայց հոգիս բացուէր կախարդական  
իր գանձերով,  
Որպէսզի ջուրն ապառաժէն լուսաբոլակէ՛ր  
սանձակոտոր,  
Պէտք էր, ո՛վ Դուն, որ դիւթական սիրոյդ հըրաշքն  
յարատուէր,

Բայց դուն այնքա՛ն եղար ժրլատ, այնքա՛ն կամշոտ  
ու կամակոր՝  
Որ ուղիսն՝ հազիւ արեւին տակ՝ շոգիացա՛ւ  
խութերուն քով,  
Եւ արդ հազիւ՝ դուն կը գտնես քանի մը բոյս  
ափերն ի վեր ...:

### ՈՒՐԻՇ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ, վերջացա՛ւ ...: Այլ չկարծէ՛ք ձեզ մոռցայ,  
Ո՛վ դուք որ օր մը այնքա՛ն անշքօրէն հեռացար ...  
Ձեզ չը մոռցա՛յ ... բայց կ'ըզգամ, կը գիտակցիմ այժմ,  
աւա՛ղ,  
Որ ձեր անծի՛ր մահն ի զուր էր եւ անգո՛ր եւ յանցա՛նք ...

Դուք մղձաւա՛նջըս էք արդ, իմ սեւեռո՛ւն գաղափարս՝  
Դուք բաժակիս մէջը թո՛յն էք ու խղճիս վըրայ խա՛յթ.  
Ես ամենուր, ամէն պահ ձեր յահախմամբ եմ հիւանդ ...  
Բայց ներեցէ՛ք ... ներեցէ՛ք ... որ ձեզ հրգել ... չե՛մ  
կրնար ...:


Գիտե՛մ թէ ինչ՝ կրնայ տալ հոգիներուն ձեր՝ հանգիստ ...  
Այդ ոչ քերթուած է, ոչ ճառ եւ ոչ կոթող լայնանիստ,  
Այդ ոչ աղօթք է, ոչ խունկ ... այլ ուրի՛շ դեղ, ուրի՛շ  
ճար ...

[կրնար ...

Մերթ կը փորձեմ ձեզ մոռնա՛լ, ձեզ ուրանա՛լ՝ չեմ  
Որովհետեւ կը սիրեմ ձեզ, ատելո՛ւ աստիճան ...  
Ու դուք կուզա՛ք հետս, յամա՛ռ, մինչեւ ի փառք կամ  
դամբան ...:

1935

Յ Ա Ն Կ



Յ Ա Ն Կ

Զօն	էջ	5	Իղձ	էջ	33
Զորավանք		7	Երգ		35
Գեղօն Վահագնի		9	Աշուղական		37
Տաւրոս		11	Գոհութիւն		39
Ուխտագնացութիւն		13	Յոյսը		41
Քառսր		15	Անձկութիւն		43
Կածանները		17	Համակերպութիւն		45
Անվերնագիր		18	Օրհնութիւն		47
Յորմեհեսէ աչքերուդ		19	Վերելք		50
Անոր՝ որ շինչ			Աւան առաւօտ		53
հոգիիդ ...		21	Ուրեմն, Երազ ...		55
Ան՝ չգիտցար ...		23	Այսպէս, սեղմէ		
Գեղօն՝ Շղթայուած			բունքերուս ...		57
Արքային		25	Վերադարձար դուն		
Վրեժն իբրեւ ...		27	ուրեմն ...		59
Մղձաւանջը		29	Տաղ առ Ասելութիւն		61
Երեկոյ		31	Վառ Երազ		63

Մեներգ	էջ	65	Կարօս	էջ	93
Ըղձանք		67	Տրսմութիւն		95
Կօսամբանք		69	Յիշատակ		97
Նաւերգ		71	Անվերնագիր		100
Անդոն		74	Տերեւաթափ		101
Որբուհիի մը		75	Յայգերգ		103
Աղօթք		77	Սիրահարութիւն		105
Մենագարը		79	Անվկանդը		107
Երանութիւն անկա-			Հանդիպում		109
րելի		81	Գօս ծաղիկ		111
Անդարձ		83	Գիշերային		113
Երբ տակաւին ...		85	Մարմոք		115
Տաղ առ Մենութիւն		87	Նկարդ		117
Մռայլ պահեր		89	Մեռելոցի դիւեր		119
Մեծարեցի գրիկն			Բացատրութիւն		121
վրայ		91	Ուրիշ Բացատրութիւն		123

ՏՊԱՐԱՆ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ ԳԱԻՐԷ

« Ազգային գրադարան



NL0365334

52390

ԳԻՆ 10 ԵԳԻՊՏԱԿԱՆ ԴԱՅԵԿԱՆ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ 10 ՖՐ. ՖՐԱՆՔ

---

Սահաղու համար դիմել հեղինակին՝

**S. Sahagian**

179, Ave. de la Reine Nazli

Le Caire, Egypte

---

Printed in Egypt by  
SAHAG - MESROB Press,  
25, Sharia Tewfik, Cairo.